ՋԻՎԱՆԻ - 171

# ՄԵԾՆ ԱՇՈՒՂԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԵՎ ԿԱՐԾԱԽՈՒՄ

## ԾԱՂԻԿՆԵՐ՝ ՄԵԾՆ ՋԻՎԱՆՈՒ ՇԻՐԻՄԻՆ

*Օգոստոսի 27-ին, Թբիլիսիի Հայ գրողների եւ հասարակական գործիչների պանթեոնում հավաքվել էին հայ մտավորականության եւ հոգեւորականության ներկայացուցիչներ՝ ծաղիկներ խոնարհելու Ջիվանու շիրիմին:*

Արարողությունը սկսվեց Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի աղոթքով: Նա նշեց, որ այս ակցիան հոգեւոր մասնակցություն է Կարծախ գյուղում հայրենակիցների կազմակերպած հանդիսությունների: Օրհնության իր խոսքում, Սրբազան հայրը մեծապես արժեւորեց Թբիլիսիում հիմնադրվող այս ավանդույթի հեղինակին՝ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանին, ում առաջարկով այսուհետ սեպտեմբերի վերջին կիրակի օրը Կարծախում եւ Թբիլիսիում միաժամանակ կմեծարեն Մեծն Ջիվանուն:



Ջիվանու՝ 800-ից ավելի ստեղծագործությունների հեղինակի, դերի մասին խոսեց պրոֆեսոր Էմմա Ախտյանը: Նա նշեց, որ Ջիվանու բազմակողմանի ստեղծագործությունը մեծապես տարբերվում է հայերենի մաքրությամբ, ի տարբերություն գործընկեր աշուղների երգերի, որոնցում առատ են փոխառությունները:

Վան Բայբուրթյանն ուշագրավ տեղեկություններ հայտնեց Աշուղի սերունդների մասին, ինչպես նաեւ հորդորեց հասարակայնությանը, հայկական դպրոցների ուսուցիչներին, որ հետագայում այսօրինակ միջոցառումներ նվիրվեն նաեւ մյուս բոլոր պատմական անհատներին, որոնք հանգչում են պանթեոնում, որպեսզի երիտասարդությունը հանգամանալի պատկերացում ունենա նրանց մասին:

Իր բանաստեղծությունները՝ նվիրված Ջիվանուն, ընթերցեց հայ գրողների «Վերնատուն» միության անդամ Արտեմ Կիրակոզովը:

Արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Հայաստանի հանրապետական կուսակցության փոխնախագահ Մուշեղ Լալայանը, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության Թբիլիսիի մասնաճյուղի ղեկավար, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը եւ այլք:

*ԱՐՏԵՄ ԳՐԻԳՈՐԵՆՑ*

## ԿԱՐԾԱԽԻ ՆՈՐԱԲԱՑ ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ՆՇԵՑ ՄԵԾՆ ՋԻՎԱՆՈՒ ԾՆՆԴՅԱՆ 171-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

*Վրաստանի Ախալքալաքիի շրջանի Կարծախ գյուղում, օգոստոսի 27-ին, անցկացվել է ավանդական տոնակատարություն՝ նվիրված այստեղ ծնվածականավոր աշուղ, բանաստեղծ, երաժիշտ Ջիվանիի (Սերոբ Լեւոնյան) ծննդյան հերթական տարեդարձին՝ 171-ամյակին:*



Այդ օրը Մեծն Ջիվանու տոնը նշանավորվեց նրա ծննդավայրում՝ աշուղի դեռեւս անցյալ տարի բացված տուն-թանգարանի ցուցասրահի համալրմամբ:

Ջիվանու ծննդավայրում տոնակատարությունը մեկնարկեց գյուղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում մատուցված Սուրբ եւ Անմահ Պատարագով՝ հանդիսապետությամբ Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանի:

Տոնական օրն ուղեկցվեց գյուղի հարակից բլուրում կայացած մեծ դաշտահանդեսով եւ հյուրասիրությամբ:

Համերգային ծրագրում ելույթ ունեցան երկրամասի տարբեր գյուղերի երգի ու պարի համույթներ՝ Կարծախի, Բարալեթիի, Դամալայի, Վաչիանիի պարի խմբերը:

Ծրագրում ընդգրկված էր նաեւ ցուցադրական ավազանկարչություն՝ Ջիվանու պատկերներով. Գյումրիի Արվեստանոցի երիտասարդ նկարիչներն ընդամենը մի քանի րոպեում դատարկ փայտերը վերածեցին արվեստի գործերի եւ ստացան Ջիվանու պատկերները, որոնք հնարավոր էր ձեռք բերել անմիջապես բեմից կամ նույնիսկ՝ մինչեւ համերգային ծրագրի մեկնարկը:

Տոնակատարությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի անդամներ Դավիթ Ճիճինաձեն, Սամվել Մանուկյանը, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների նախագահներ Էդվարդ Աղասարյանը եւ Գագիկ Կարսլյանը, ՀՀ Սփյուռքի նախարարի տեղակալ Սերժ Սրապիոնյանը, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորներ Արման Սահակյանը, Շիրակ Թորոսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, Հայաստանի ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթեւոսյանը, Ջավախքի աջակցության հիմնադրամի (ՋԱՀ) հոգաբարձուների խորհրդի նախագահ Սոս Սահակյանը եւ այլք:

*ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ*



# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՎԱՐԿԱԾ

## ԵՐԱԶԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ



***Ընդհանրապես, երազ չեմ տեսնում եւ զարմանում եմ, երբ ուրիշները մանրամասն պատմում են տեսած երազները։ Երբեմն կասկածում եմ՝ երազդ գունավո՞ր էր, թե սեւ-սպիտակ։ Հետաքրքիր է, երազ տեսնել-չտեսնելը ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ։***

***Մ.Ոսկանյան***

***Նինոծմինդա***

Ձեր հարցին միանշանակ պատասխանելը բավական դժվար է, թեպետ նշենք, որ ավստրալացի գիտնականները պարզել են, որ արագ քնի փուլի կրճատումը, որի ընթացքում մարդը երազներ է տեսնում, կապված է թուլամտության զարգացման մեծ ռիսկի հետ։ Համապատասխան հետազոտությունը հրապարակված է Neurology հանդեսում, դրա մասին հակիրճ հաղորդել է ԱՄՆ Նյարդաբանության ակադեմիան։

Գիտափորձին մասնակցել է միջինը 67 տարեկան 321 մարդ Մասաչուսեթսից (ԱՄՆ)։ Նրանց հսկել են (այդ թվում՝ հետեւելով գլխուղեղի ռիթմերին) մոտավորապես 12 տարվա ընթացքում։ Այդ ժամանակի ընթացքում 32 մարդու մոտ ախտորոշվել է թուլամտության ձեւերից մեկը, 24-ի մոտ՝ Ալցհայմերի հիվանդություն։

Հենց արագ քնի փուլի, այլ ոչ թե այլ ժամանակամիջոցների կրճատումը, ինչպես ցույց են տվել հեղինակները, կապված է եղել թուլամտության հետ։ Փաստորեն, արագ քնի տեւողության մեկ տոկոս նվազումը դրականորեն է հարաբերակցել թուլամտության զարգացման ռիսկի ինը տոկոս բարձրացմանը։

- Մեր արդյունքներն արագ քնի փուլը նշում են որպես թուլամտության պրեդիկատոր,- ասել է համահեղինակ Մեթյու Պասեն։- Հատագայում մենք պետք է հասկանանք այն պատճառները, որոնցով արագ քնի փուլի տեւողությունը կապված է թուլամտության առաջացման մեծ ռիսկի հետ։

Քնի ընդամենը հինգ փուլ կա։ Արագ քնի ժամանակամիջոցը դրանցից վերջինն է եւ բնորոշվում է գլխուղեղի մեծ ակտիվությամբ։ Այդ ժամանակ մարդը, որպես կանոն, տեսնում է երազներ, իսկ նրա ակնախնձորներն արագ շարժումներ են կատարում։

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՐՈՒՍՏԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է, ԻՍԿ Ո՞Վ Է ԳՏՆՈՒՄ



***Հեռուստատեսությամբ ժամանակ առ ժամանակ տեղեկացնում են աշխարհի ամենահարուստ մարդկանց մասին։ Վերջերս լսեցի, որ առաջին տասնյակի հարուստները կորցրել են միլիարդների հասնող ահռելի գումարներ։ Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը։***

***Վ.Սողոմոնյան***

***Բոլնիսի***

Amazon-ի գլխավոր գործադիր տնօրեն Ջեֆ Բեզոսը շարունակում է զիջել դիրքերը աշխարհի ամենահարուստ մարդկանց վարկանիշում։ Օգոստոսի 10-ին նրա կարողությունը նվազել է 2 մլրդ դոլարով, ինչի հետեւանքով նա իջել է ցուցակի երրորդ տեղը։ Դա տեղի է ունեցել աշխարհի սակարաններում՝ Amazon-ի բաժնետոմսերի արժեքի 2,6 տոկոս անկման հետեւանքով։ Գործակալության տվյալներով, այդ օրը նվազել են բազմաթիվ այլ ընկերությունների գնանշումներ։ Սակարկությունների արդյունքներով, թոփ-500-ի հարուստներն ընդհանուր առմամբ կորցրել են 42,7 մլրդ դոլար։

Օգոստոսի 10-ը բորսաներում ամենավատ օրն է դարձել վերջին երեք ամիսների ընթացքում։ Ֆոնդային շուկան այդ կերպ է արձագանքել Հյուսիսային Կորեայի հասցեին նախագահ Դոնալդ Թրամփի արած ռազմաշունչ հայտարարություններին։ ԱՄՆ ղեկավարը, մասնավորապես, հայտարարել է, որ ԿԺԴՀ-ն պետք է «շատ, շատ նյարդանանա», եթե անգամ մտածի հարձակվել Միացյալ Նահանգների կամ նրա դաշնակիցների վրա։

Առաջին հերթին կորուստներ են կրել բարձրտեխնոլոգիական ընկերությունների սեփականատերերը։ Այսպես, NetEase չինական ինտերնետ-ընկերության ղեկավար Դին Լեյը կորցրել է 1,8 մլրդ դոլար, Facebook-ի հիմնադիր Մարկ Ցուկերբերգը՝ 1,6 մլրդ դոլար։

Հուլիսի 27-ին Բեզոսը ճանաչվել էր աշխարհի ամենահարուստ մարդը։ Այդ պահին նրա կարողությունը կազմում էր 90,5 մլրդ դոլար՝ 500 մլն դոլարով ավելի, քան Microsoft-ի հիմնադիր Բիլ Գեյթսինը։ Սակայն արդեն հաջորդ օրը Amazon-ի ղեկավարը զիջեց առաջատարի դիրքը՝ հայտնվելով վարկանիշի երկրորդ տեղում։ Սակարկությունների արդյունքներով, նրա կապիտալը նվազեց մինչեւ 88,7 մլրդ դոլար՝ Գեյթսի 89,8 միլիարդի դիմաց։

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ՍՏԵՆՈԿԱՐԴԻԱՅԻ ՆՈՊԱՆԵՐԸ ԿԱՆԽՈՂ ԵՎ ԲՈՒԺՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

***Քսան եւ քսանմեկերորդ դարերի ամենատարածված սրտի իշեմիկ հիվանդության կանխման եւ բուժման հիմնախնդիրը չի կորցնում իր հրատապությունը։ Աշխարհում տասնյակ միլիոնավոր մարդկանց համար հարցը առավել քան կենսական նշանակություն ունի։***

Սրտի իշեմիկ հիվանդության առավել տարածված ձեւերից է ստենոկարդիան, որի պատճառը աթերոսկլերոզի հետեւանքով սրտի պսակաձեւ զարկերակների լուսանցքի սեղմումով, անոթների կծկանքով կամ դրանց զուգակցումով պայմանավորված՝ սրտամկանի անբավարար արյունամատակարարումն է։ Նման դեպքերում լինում է լարման ստենոկարդիա, որի նոպաները հաճախ առաջանում են արագ քայլելիս, սար բարձրանալիս եւ դադարում են կանգ առնելիս։ Ստենոկարդիայի նոպաներ առաջանում են նաեւ ծխելուց, ալկոհոլ գործածելուց, շատ ուտելուց։ Հազվադեպ են հուզմունքի հետեւանքով առաջացող լարման նոպաները։



Ստենոկարդիայի նոպաները կանխելու համար նախ՝ պետք է խուսափել ցավ առաջացնող ֆիզիկական բեռնվածությունից եւ նյարդային լարվածությունից, բայց եւ խորհուրդ չի տրվում լիարժեք հանգիստ, թույլատրելի են որոշ ֆիզիկական բեռնվածություններ։ Պետք է սնվել փոքր բաժիններով, քանի որ շատ ուտելը կարող է դառնալ ստենոկարդիայի նոպայի պատճառ։

Բուսաբուժությունը ստենոկարդիայի ժամանակ ունի բազում օգտակար միջոցներ, որոնք ոչ միայն հանգստացնող, այլեւ բուժող հատկություն ունեն։

Վերցնել հավասար քանակությամբ չամիչ, ծիրանի չիր, սեւ սալորի չիր, ընկույզ, մի հատ կիտրոն։ Աղալ մսաղացով եւ ավելացնել 300 գրամ մեղր։ Ուտել ամեն առավոտ՝ սոված փորին, մեկական ճաշի գդալ։

Հավասար քանակությամբ սխտոր, մեղր եւ կիտրոն խառնել իրար եւ 7 օր դնել սառնարանում։ Օրական մեկ անգամ խառնել։ Օգտագործել օրական 3 անգամ, մեկական ճաշի գդալ, ուտելուց հետո։

Երկու ճաշի գդալ չորացրած արեւքուրիկի վրա ավելացնել 1 բաժակ եռացրած ջուր եւ 1 ժամ թողնել թրմվի, քամել։ Խմել օրական 3 անգամ՝ 50-ական միլիգրամ։

Վերցնել 1 մաս հազարտերեւուկ, 1 մաս կատվախոտ, 1 մաս արեւքուրիկ, խառնել իրար եւ 1 ճաշի գդալ խառնուրդի վրա ավելացնել 1 բաժակ սառը ջուր։ 4 ժամ թողնել թրմվի, որից հետո 5 րոպե եռացնել։ Եվս 2 ժամ թրմել ու քամել։ Խմել օրական 3 անգամ, ամեն անգամ 13 բաժակ։

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿ՝ ՔԱՂՑԿԵՂԻ ԵՎ ԻՆՖԱՐԿՏԻ ԴԵՄ



***Գիտնականների միջազգային խումբը հայտնաբերել է, որ, կանակինումաբը, միաժամանակ, նվազեցնում է սիրտ-անոթային հիվանդությունների զարգացման վտանգը եւ քաղցկեղի առաջացման հավանականությունը։ Համապատասխան հետազոտությունը հրապարակված է The New England Journal of Medicine-ում, դրա մասին հակիրճ հայտնել է The Guardian-ը։***

Սիրտ-անոթային հիվանդությունների զարգացման վտանգը, ներառյալ մահացու վախճանով դեպքերը, կանակինումաբի ներարկումներից հետո նվազում են 15 տոկոսով, իսկ արյունատար անոթների զուգահեռման անհրաժեշտությունը՝ 30 տոկոսով։ Քաղցկեղով հիվանդությունը (մասնավորապես, թոքերի ուռուցքը) նվազել է 75 տոկոսով։ Վերջինի պատճառներն առայժմ պարզ չեն։

Հետազոտությունը կատարվել է 2011-ից մինչեւ 2014 թվականն ընկած ժամանակամիջոցում, դրան մասնակցել է շուրջ 17,5 հազար մարդ։ Մասնակիցների միջին տարիքը կազմել է 61, նրանք բոլորը սրտամկանի ինֆարկտ են տարել։ Կանակինումաբը մշակել է Novartis ընկերությունը։ Կատարված հետազոտությունը նույնպես ֆինանսավորել է այդ ֆիրման։

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մարդկության հոգին կրթյալ կինն է։

***ՐԱՖՖԻ***
***(1835-1888)***
***Հայ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ***

Ով կհասկանա խաղերը բախտի, նրա դավերից չի փախչի ոչ ոք։

***ՇՈԹԱ ՆԻՇՆԻԱՆԻՁԵ***
***(1929-1999)***
***Վրաց բանաստեղծ***

Ամենայն իմաստության հիմքը համբերությունն է։

***ՀԻՊՈԿՐԱՏ***
***(մ.թ.ա.460-մ.թ.ա.377)***
***Անտիկ հույն բժիշկ, փիլիսոփա***

Բոլորից ուժեղը ինքը իրեն տիրապետողն է։

***ՍԵՆԵԿԱ***
***(մ.թ.ա.4-65)***
***Հռոմեացի փիլիսոփա***

Բռնությունը ստեղծել է առաջին ստրուկներին, վախկոտությունը նրանց հավերժացրել է։

***ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՈ***
***(1712-1778)***
***Ֆրանսիացի փիլիսոփա***

Մարդ որքան խելացի ու հմուտ է, այնքան ավելի ատելի է դառնում, երբ կորցնում է ազնվության իր համբավը։

***ԱՐԹՈՒՐ ԱԹԱԲԵԿՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Հենց նոր ոսկե ժամացույցս հանեցին,- բողոքում է չուկչան ընկերոջը։*

*- Իսկ ինչո՞ւ օգնության չէիր կանչում։*

*- Վախենում էի բերանս բացել։ Ատամներս էլ են ոսկուց...*

*☺ Տղան համակուրսեցիներին հրավիրում է իրենց տուն, մորն ասում է.*

*- Մա'մ, կարո՞ղ ես գուշակել, թե էս աղջիկներից որն է իմ ընկերուհին.*

*- Ա՜յ էն կարմիր զգեստովը, տղա' ջան.*

*- Բայց ո՞նց գուշակեցիր։*

*- Հիմիկվանից ներվերիս վրա ազդում ա.*

*☺ Ամուսինը գործուղումից վերադառնում ա ու խոստովանում, որ կորցրել ա նշանի մատանին։*

*- Չեմ հասկանում, ախր ո՞նց հաջողացրեցիր։*

*- Դո'ւ ես մեղավոր։ Հազար անգամ ասել եմ, որ գրպանս ծակ ա։*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ԿՍՏՈՐԱԳՐՎԻ ԱՇՆԱՆԸ

*Հայաստանը աշնանը ԵՄ-ի հետ ստորագրելու է Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիր:*

Այս մասին հայտնեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը` «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի մասնակիցների հետ հանդիպման ժամանակ` պատասխանելով ճամբարականների հարցերին:

- Այո՛, մենք աշնանը ստորագրելու ենք: Ինչո՞ւ եմ այսպիսի համոզվածությամբ ասում, որովհետեւ փաստաթուղթն արդեն իսկ նախաստորագրված է: Մենք, եթե չեմ սխալվում, մարտ ամսին հայտարարեցինք, որ փաստաթուղթն արդեն, ընդհանուր առմամբ, բանակցված է, եւ դրանից հետո նախաստորագրեցինք: Մենք այդ փաստաթուղթը չստորագրելու որեւէ պատճառ չունենք,- նշեց Սերժ Սարգսյանը:

Հայաստանի նախագահը նշեց նաեւ, որ որոշ` հատկապես օտարերկրյա լրատվամիջոցների փորձերը` 2013թ.-ի Եվրասիական տնտեսական միությանը միանալու Հայաստանի որոշումը «մեկ գիշերվա մեջ կայացրած որոշում» ներկայացնելու մասին, անհիմն են եւ պարզապես ծիծաղելի:

- Մենք բանակցում էինք ե՛ւ Եվրասիական տնտեսական միության հետ, ե՛ւ Եվրամիության հետ, որովհետեւ ի սկզբանե երկու կողմն էլ ասում էին, որ մեկը մյուսին չի խանգարի: Բայց երբ Եվրամիությունն ասաց` խանգարում է, մենք ի՞նչ պետք է անեինք,- ասաց Սերժ Սարգսյանը:

## ՊԱՐԳԵՎՆԵՐ` ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ



Հայաստանի դպրոցների բարձր առաջադիմություն ցուցաբերած, միջազգային օլիմպիադաներում հաջողություններ արձանագրած եւ կրթական տարբեր մրցույթների մասնակից աշակերտները Հայաստանի նախագահի նստավայրում ստացան իրենց պարգեւները, հավաստագրերն ու նվերները: Պարգեւներն ու հավաստագրերը աշակերտներին հանձնեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանը:

Միջոցառմանը հավաստագրեր ստացան «Կենգուրու. Մաթեմատիկան բոլորի համար» միջազգային մրցույթում եւ «Մեղու. Հայերենը բոլորի համար» մրցույթում հաջողությունների հասած աշակերտները: Հայաստանի կրթության եւ գիտության նախարարի հրամանով` գերազանցության մեդալով պարգեւատրվեցին ուսման ընթացքում բարձր առաջադիմություն ցուցաբերած աշակերտները, նվերներ արժանացան դպրոցական միջազգային օլիմպիադաներում մեդալներ նվաճած երեխաները:

Պարգեւների, հավաստագրերի եւ նվերների հանձնման արարողությունից հետո ելույթ ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

2016-2017թթ. ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաներին մասնակցել է շուրջ 47 հազար 500 աշակերտ: Միջազգային օլիմպիադաների թիմերը կազմվում են հանրապետական փուլի հաղթողներից: 16 առարկաներից հանրապետական փուլին մասնակցել է շուրջ 1700 աշակերտ, որոնցից առաջին կարգի դիպլոմի է արժանացել 63 աշակերտ, երկրորդ կարգի դիպլոմի` 120 եւ երրորդ կարգի դիպլոմի` 156 աշակերտ:

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

*Սեպտեմբերի 1-ին մեկնարկած 2016/17 ուստարում Հայաստանի Հանրապետությունն ունի 40 հազար առաջին դասարանցի: Այս մասին նշեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության հանրակրթության վարչության պետ Աշոտ Արշակյանը:*



- Բոլոր հանրակրթական դպրոցներն ապահովված են դասագրքերով: Այս տարի, ինչպես եւ նախորդ տարի, 1-ից 4-րդ դասարանների աշակերտները դասագրքերը կստանան անվճար: Նախագահի հանձնարարությամբ` այս տարի 38 սահմանամերձ համայնքներում, որոնք պետության կողմից ստանում են սոցիալական աջակցություն, 1-12 դասարանի աշակերտները դասագրքերը կստանան նույնպես անվճար,- ասաց Արշակյանը:

Նրա խոսքով, բոլոր դպրոցների շինարարական եւ վերանորոգման աշխատանքերն ավարտված են եւ ամբողջությամբ պատրաստ են պատշաճ կերպով դիմավորել աշակերտներին:

## ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՄՆՈՒՄ Է ԿԱՅՈՒՆ

*Հայաստանում 2000 թվականից ի վեր ծնելիության մակարդակը մնացել է կայուն: Այդ մասին «Հայաստանի ժողովրդագրության եւ առողջության հարցերի հետազոտություն. 2015-16 թվականներ» զեկույցի շնորհանդեսի ժամանակ ասաց Հայաստանի առողջապահության նախարարության մոր եւ մանկան առողջության պահպանման վարչության պետ Կարինե Սարիբեկյանը:*

- Կանայք միջինն ունենում են 1.7 երեխա: Ծնելիությունը քաղաքաբնակ` 1.7 երեխա եւ գյուղաբնակ` 1.8 երեխա կանանց շրջանում գրեթե չի տարբերվում,- ասաց Սարիբեկյանը եւ հավելեց, որ ծնելիությունը նվազում է կնոջ կրթական մակարդակի աճին զուգընթաց:

ՀՀ առողջապահության նախարարության մոր եւ մանկան առողջության պահպանման վարչության պետը նշեց, որ Հայաստանում կանայք եւ տղամարդիկ գրեթե նույն տարիքում են սկսում սեռական կյանքը:

Մոր եւ մանկան առողջության պահպանման վարչության պետը, վկայակոչելով զեկույցը, հայտնեց, որ կանայք առաջին անգամ ծննդաբերում են ամուսնությունից հետո` 1.5 տարի անց. միջին տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ 22.8 տարեկան է:

- Միջին տարիքը էապես փոխվում է ըստ մարզերի: Գեղարքունիքում բնակվող կանանց միջին տարիքն առաջին ծննդաբերության ժամանակ մոտ 3 տարով ավելի է` համապատասխանաբար 21.4 եւ 24.5 տարեկան»- եզրափակեց Սարիբեկյանը:

## ԲԱՑՎԵՑ ՎԱՐԴԵՆԻՍ- ՄԱՐՏԱԿԵՐՏ ՆՈՐ ՄԱՅՐՈՒՂԻՆ



*Սեպտեմբերի մեկին պաշտոնապես բացվեց Արցախը Հայաստանին կապող (Գորիս-Ստեփանակերտ ճանապարհից հետո)` Վարդենիս-Մարտակերտ երկրորդ մայրուղին:*

Ավտոճանապարհը սկիզբ է առնում Գեղարքունիքի մարզից եւ Արցախի Շահումյանի շրջանով ձգվում մինչև Մարտակերտի շրջան: 114 կմ երկարությամբ ճանապարհն ունի 10 եւ ավելի մետր լայնություն: Մայրուղին ունի օժանդակ կառույցներ, այդ թվում` ջրահեռացման խողովակներ, ափապաշտպան կառույցներ, հենապատեր, եզրաքարեր, վերանորոգված 17 մեծ ու փոքր կամուրջներ:

Վարդենիս-Մարտակերտ ճանապարհը «Հայաստան» համահայկական հիմնադրամի` 25 տարվա գործունեության ընթացքում իրականացրած ամենախոշոր ծրագիրն է: Ծրագրի ընդհանուր արժեքն է մոտ 17մլրդ ՀՀ դրամ, որից 7.500 000 000 դրամը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 1 950 000 000 դրամը` ԱՀ կառավարությունը: Մնացած գումարը «Հայաստան» համահայկական հիմնադրամը հավաքագրել է 2013 և 2014 թվականների հեռուստամարաթոնների շրջանակներում, որոնց իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել Միացյալ Նահանգների, Բրազիլիայի, Իտալիայի, Շվեդիայի, Ռուսաստանի, Լիբանանի, Իրանի հայ համայնքների, Հայաստանի ու Արցախի նվիրատուները:

### ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ` ՆՎԻՐՎԱԾ ԼՂՀ-Ի ՀՌՉԱԿՄԱՆ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

*Օգոստոսի 30-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ստեփանակերտում Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ, մասնակցել ԼՂՀ հռչակման 26-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումներին:*

### ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԿՀԱՆԴԻՊԵՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ու Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Շեյխ ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն սեպտեմբերին հանդիպելու են: Նախնական տվյալներով` հանդիպումը տեղի կունենա սեպտեմբերի 8-ին, Մոսկվայում: Նրանք քննարկելու են ղարաբաղյան հակամարտությանն ու տարածաշրջանային խաղաղությանն առնչվող հարյեր: Հանդիպումը կազմակերպվում է Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլի միջնորդությամբ:*

### ՃԱՊՈՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԻԶԱՆ ՎԵՐԱՑՎՈՒՄ Է

*Ճապոնիայի քաղաքայիները կազատվեն Հայաստան մուտքի վիզայի պահանջից: Ճապոնիայի քաղաքայիները կկարողանան առանց մուտքի վիզայի` 1 տարվա ընթացքում այցելել եւ մնալ Հայաստանի տարածքում առավելագույնը 180 օր ժամկետով: Այդ մասին որոշման նախագիծն ընդգրկված է կառավարության օգոստոսի 31-ի նիստի օրակարգում:*

*Ըստ հիմնավորման, 2010թ. ՀՀ դեսպանության բացումը Տոկիոյում եւ 2015թ. Ճապոնիայի դեսպանության բացումը Երեւանում որակապես նոր լիցք են հաղորդել երկկողմ հարաբերությունների զարգացմանն ու խորացմանը բոլոր բնագավառներում: 2017թ. հունվարի 1-ից Ճապոնիայի քաղաքացիներն ունեն ազատ մուտքի արտոնագիր կամ սահմանին այն ստանալու ընթացակարգ` 172 երկիր այցելելու համար: Ճապոնիայի քաղաքայիները Վրաստան այցելելու դեպքում ազատվում են մուտքի արտոնագրի պահանջից, իսկ Ադրբեջան այցելելու դեպքում մուտքի արտոնագիր ստանում են սահմանին:*

### ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ «ՆԱԻՐԻՏԻ» ՀՐԴԵՀԻ ԳՈՐԾՈՎ

*Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ, օգոստոսի 28-ին, ահազանգ է ստացվել, որ Երեւանի «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տարածքում հրդեհ է բռնկվել: Հրդեհի հետեւանքով այրվել են պահեստարաններում պահեստավորված նյութերը, ջերմահարվել բետոնե տարողություններն ու այրվել հարակից խոտածածկ տարածքները: Հրշեջների օպերատիվ աշխատանքի շնորհիվ, հաջողվել է կարճ ժամանակահատվածում հրդեհը տեղայնացնել եւ կանխել դրա տարածումը գործարանի տարածքում:*

*Օգոստոսի 29-ին, ՀՀ ԱԻՆ պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության աշխատակիցների կողմից տեղում իրականացվել են անհետաձգելի քննչական գործողություններ: Մասնավորապես, կատարվել է դեպքի վայրի զննություն, բացատրություններ են վերցվել ականատեսներից:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(1 սեպտեմբերի)

*Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 477,20 | 479,70 |
| ԵՎՐՈ | 565,00 | 572,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,15 | 8,29 |

*Օգոստոսի 25-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 0,3 դրամով:*

ՆՈՐ ԳԻՐՔ

# ԸՆԹԵՐՑՈՂԻ ՍԵՂԱՆԻՆ՝ 2017 ԹՎԱԿԱՆԻ «ՎԵՐՆԱՏՈՒՆ» ՏԱՐԵԳԻՐՔԸ




*Այս տարի լրացավ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության հիմնադրման քսանամյակը: Օրերս լույս տեսավ միության «Վերնատուն» տարեգրքի հերթական 11-րդ համարը: Այն հանդիսանում է «Վերնատուն» միության կենսունակ երթի վկայագիրը:*

*Տարեգրքի խմբագիրն է միության հիմնադիր-նախագահ, բանաստեղծ Գեւորգ (Ժորա) Սնխչյանը:*

*Վրաստանի ժամանակակից հայ ստեղծագործողների հոգեւո՛ր այս մատյանում ներկայացված են 30-ից ավելի հեղինակներ, ընթերցողին քաջածանոթ ու անծանոթ անուններ:*

«Վերնատուն» տարեգիրքի այս համարի էջերից ընթերցողի հետ երեք սերունդ է խոսում, եւ խոսքն այդ մատուցված է գրական գրեթե բոլոր ժանրերով՝ չափածո, արձակ, լրագրական... Իր առաքելությանը հավատարիմ մնալով՝ ստեղծագործող տարբեր սերունդներ իր շուրջն հավաքած «Վերնատունը», գրականության գաղտնիքներն ուսած ավագ հեղինակների՝ Խաժակ եփրիկյանի, Ստանիսլավ Մելքոնյանի, Գեւորգ Սնխչյանի, երջանկահիշատակ հեղինակներ Վիկտոր Հովսեփյանի եւ Անահիտ Բոստանջյանի ուղղորդող գրչով, խնամքով առաջնորդում է գրական դաշտի մատղաշ ծիլերին, ում ներկայությունը գրքում գրավականն է սերնդափոխության օրինաչափ իրողության: Հավատը հույսի, որ հայ գրականություն գալիս է տաղանդավոր երիտասարդություն, ով բերում է իր հետ ավագ սերնդի ուսանելի եւ չկրկնվող երգը՝ նոր մոտիվներով, նոր ձեւերով, նոր գույներով:

Տարեգրքի հեղինակները հանդես են եկել նաեւ ռուսերեն ու վրացերեն ստեղծագործություններով, վրացի եւ ռուս պոետները հնչում են հայերեն եւ՝ հակառակը: «Վերնատան» բանաստեղծները, արձակագիրները նման չեն մեկը մյուսին. յուրաքանչյուրն ունի իր ձայնը: Բայց նրանք ունեն մի ընդհանուր բան. դա անսահման սերն է դեպի Մարդը:

Գրքի՝ «Թարգմանական», «Մեր նոր Վերնականները», «Այլալեզու գրողներ», «Гости «Вернатуна» խորագրերի շնորհիվ՝ կարողանում ենք ընդգրկուն պատկերացում ունենալ վիրահայ այսօրվա գրական գունեղ հարթակի մասին: Նաեւ հավատալ՝ վիրահայ մշակույթի պահպանմանն ու շարունակվող ճանապարհին:

Լավ կլիներ, եթե «Վերնատան» հաջորդ համարներում մեկ-երկու տողով տեղեկացվեր հեղինակի ծննդավայրը, ինչու չէ, նաեւ՝ տարիքը. կարծում ենք՝ այդպես նա առավել լիարժեք կընկալվեր: Ի դեպ, ասենք նրանց, ովքեր չգիտեն, որ այս վերջին տարեգրքի ամենատարեց հեղինակը 94-ամյա, թբիլիսցի, վաստակաշատ մանկավարժ Խաժակ Եփրիկյանն է, իսկ ամենաերիտասարդը՝ Նինոծմինդայի շրջանի Սաթխա գյուղի դպրոցական, 19-ամյա Հաբեթնակ Պողոսյանը...

Տարեգիրքը լույս է տեսել Թբիլիսիում, Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության հովանավորությամբ:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ԱՎԱՆԴՈՒՅԹ

# ՀԱՎԱՍՈՒ ՊՈԵԶԻԱՅԻ ՕՐԸ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ



Հայ աշուղական արվեստի դասական, գուսան Հավասու (Արմենակ Մարկոսյան,1896-1978թթ.) ոգեկոչման ավանդատոնը այս տարի տեղի կունենա սեպտեմբերի 3-ին, գուսանի ծննդավայրում՝ Վրաստանի Ծալկայի շրջանի Այազմա գյուղում, ժամը 12-ին: Հանդիսությին, ինչպես միշտ, կմասնակցեն Հայաստանից ու Վրաստանի տարբեր վայրերից ժամանած գրողներ, մտավորականներ, հանրության տարբեր խավարի ներկայացուցիչներ:

ՍՊՈՐՏ

## ԵՐԿՈՒԱԿԱՆ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿՏԻՎՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում եզրագիծը հատեց ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունը:

Մրցումների եզրափակիչ օրը Վրաստանի թիմը իր արկիվում գրանցեց երկու ոսկե եւ երեք բրոնզե մեդալներ: Մոլորակի չեմպիոններ դարձան Զուրաբ Իակոբաշվիլին (65 կգ քաշային կարգ) եւ Գենո Պետրիաշվիլին (մինչեւ 125 կգ): Բրոնզե մեդալների արժանացան Վլադիմիր Խինչագաշվիլին (61 կգ), Ռոբերտ Կոբլիաշվիլին (85 կգ) եւ Ռեւազ Նադարեիշվիլին:

Ինչպես արդեն հաղորդել ենք, մրցաշարի մեկնարկին աչքի ընկան հայ ըմբիշները: Այսպես, Արթուր Ալեքսանյանը 98 կգ քաշային կարգում, իսկ Մաքսիմ Մանուկյանը 80 կգ քաշային կարգում արժանացան չեմպիոնի կոչման, իսկ Հայաստանի հավաքականի անդամներ Գիորգի Կետոեւ ու Լեւան Բերիանիձեն, համապատասխանաբար, 97 եւ 125 կգ քաշային կարգերում նվաճեցին բրոնզե մեդալներ:

Այսպիսով, Վրաստանն իր երկու ոսկե եւ երեք բրոնզե մեդալներով թիմային հաշվարկում զբաղեցրեց չորրորդ տեղը: Հայաստանի թիմը երկու ոսկե եւ երկու բրոնզե մեդալներով հինգերորդն էր: Առաջին երեք տեղերը զբաղեցրին Ճապոնիայի (6 ոսկե, 1 արծաթե, 2 բրոնզե), ԱՄՆ-ի (3ոսկե, 3 արծաթե, 3 բրոզե) եւ Թուրքիայի (3 ոսկե, 1 արծաթե, 3 բրոնզե) թիմերը:

## ՕԹԱՐ ԵՐԱՆՈՍՅԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉՈՒՄ



Վրաստանի բռնցքամարտի հավաքականի անդամ, Վրաստանի վաստակավոր մարզիչ Ատոմ Էլիզբարյանի սան Օթար Երանոսյանը, գերմանական Համբուրգ քաղաքում անցկացվող աշխարհի առաջնության քառորդ եզրափակիչում՝ 60 կգ քաշային կարգում, պարտության մատնելով Ուզբեկստանի ներկայացուցչ Ադիլետ Կուրմետովին: Առաջնության քառորդ եզրափակիչ փուլում՝ Օթար Երանոսյանը պարտության մատնեց 2015 թվականի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, 2017 թվականի Ասիական խաղերի հաղթող ուզբեկ Էնուր Աբդուրահիմովի հետ: Նա նվաճեց սեպտեմբերի 1-ին մրցաշարի կիսաեզրափակիչում կուբացի Լազարո Ալվարեսի հետ մենամարտելու իրավունք:

# ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Խոսքի մաս: 4.Գետ Վրաստանում: 10.Գործվածքի տեսակ: 11.Երկնիշ թիվ: 12.Հայկական ճաշատեսակ: 13.Շիրազի քանդակագործ որդիներից: 14.Մեծահարուստ, ձեռնբաց մարդ: 15.Ավտոմեքենայի մաս: 16....-կարասի: 17.Վրաց կինոռեժիսոր Մ.Ճիաուրելու ֆիլմերից «...ի այրին»: 18.Հայաբնակ գյուղ Աբխազիայում: 19.Ժողովրդական նվագարան: 22.«Ես ... եմ գործում, դու ընտիր գորգեր» (Աշուղ Ջիվանի): 23.Միավորված ազգերի կազմակերպություն: 24.Սլավոնական ազգ: 26.Քաղաք Սիրիայում, Եփրատի ափին ... էլ Զոր: 27.Որդի, ուստր, զավակ: 29.Բագրատունի թագավոր: 31.Հայկական ամսանուն: 35.Տիպ, դաս, տեսակ: 36.Հ.Շիրազի ժողովածուներից: 37.Վրաց ճանաչված նախկին ֆուտբոլիստ ... Կալաձե: 39.Նկարչի «արարածը»: 40.... Դաբի, ... Հասան, ... Լալա: 41.Վախ, սարսափ: 42.... ծխանի: 43.Հովհ.Թումանյանի հերոսներից: 45.Կանխավճար, որեւէ աշխատանքի դիմաց նախօրոք տրված գումար: 47.Համադասական շաղկապ: 49.Պետություն Աֆրիկայում, որի մայրաքաղաքը Լոմեն է: 50.Քրիստոսի լեռը Իսրայելում: 51.Քիմիական տարր: 53.Թբիլիսիում ծնված օպերային երգիչ ... Հովհաննիսյան: 54.Մաքսակետ Վրաստանի եւ Թուրքիայի միջեւ: 55.Ե.Չարենցի ծննդավայր քաղաքը: 57.Էլեկտրական հարթող գործիք: 59.Րաֆֆու վեպերից: 60.Հանրահայտ նկարիչ ... Թերլեմեզյան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Կեղեւ, վրայի վերեւի շերտը: 2.Արեւ, արեգ: 3.Ղազախստանի Ալմա Աթա քաղաքն այժմ: 4.Հերոս «Ինչո՞ւ է աղմկում գետը» ֆիլմում: 5.Վրաստանի դրամական միավորը: 6.Կիսատ, թերի, չվերջացրած: 7.Անապատ Հարավային Ամերիկայում: 8.Երաժշտական գործիք: 9.Մեծ բանաստեղծ Ավ.Իսահակյանի եղբոր որդին, գրող, ռուսական բանակի սպա, զոհվել է Էրզրումի կռիվներից մեկի ժամանակ: 20.Կարճ, իմաստալից ստեղծագործություն: 21.Արեւմտահայ գրող, խմբագիր, 1915թ. Հայոց Մեծ եղեռնի զոհ ... Զարդարյան: 22.Որեւէ բանից ծառս եղած, վախեցած: 25.Եկեղեցու սպասավոր: 28.Արգինայի ձորի զոհ ... Ղուկասյան: 30.Իրանի երրորդ քաղաքը: 32.Ուսուցչապետ, կրոնապետ, վարդապետ: 33.Արեւմտահայ գրող Երվանդ Սրմաքեշխանլյանի կեղծանունը: 34.Վրացի հայտնի նկարիչ: 38.Թուրքական քաղաքական գործիչ, Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Կարո ...: 44.Քառագագաթ լեռ Հայաստանում: 45.Շաքարի գործարան Վրաստանում: 46.ՀՀ հանրային հեռուստատեսության առաջին ալիքի առաջին հաղորդավար ... Շլեպչյան: 48.Ամենամեծ օվկիանոսը: 50.Վրաց կինոյի աստղ ... Ճիաուրելի: 52.Շիրվանզադեի ստեղծագործություններից: 54.Աներծ, անպիղծ: 56.Նախկինում հացահատիկը կալսելու տեղ: 58.Դիակ, սառած մարմին:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Նայադ: 9.Ենիչերի: 10.Խաթր: 11.Խառատ: 12.Այսպիսի: 15.Տայմ: 16.Երկուս: 17.Սուսեր: 19.Սկուբի: 21.Մարդ: 24.Վեզուվ: 25.Ամբարել: 27.Մեղր: 28.Լեկ: 30.Կաղամբ: 34.Քուռ: 35.Նավատորմ: 38.Դու: 39.Անարար: 41.Շիկնել: 44.Գահ: 45.Տարտամ: 46.Դարպաս: 48.Թութակ: 49.Եթե: 50.Մանդատ: 51.Լեգրան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Քառասուներեք: 2.Նախատեսում: 3.Շերամ: 4.Գիպսե: 5.Բենիկ: 6.Ուիլիս: 8.Դատարկվել: 13.Պրիմա: 14.Սուկրե: 18.Գիմ: 20.Բարկա: 22.Արամո: 23.Դլե: 26.Բուղա: 29.Կուսակրոն: 31.Ավիշ: 32.Ատակ: 33.Բրդե: 35.Նորամուտ: 36.Մուլասեն: 37.Պաշտում: 40.Ագաթա: 42.Իթակե: 43.Նեպեր: 46.Դալ: 47.Աթա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445